ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
«ՀԱԿԳՀԱՊՁԲ17/06» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ
ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ

/կազմվում է համաձայն «Գնումների մասին» օրենքի 9-րդ հոդվածի/

1. Պատվիրատուի անվանումը, գտնվելու վայրը և ապրանքի համառոտ նկարագիրը

Հայաստանի ազգային կինոկենտրոն ՊՈԱԿի կարիքների համար Վառելիքի/բենզինի/ ձեռքբերելու նպատակով Հայաստանի ազգային կինոկենտրոն ՊՈԱԿ- տնօրենի 31.05.2017թ. թիվ 6-Գ հրամանի համաձայն ստեղծվել է պատասխանատու ստորաբաժանում, որը 31.05.17թ-ին պատրաստել է գնման հայտ և զեկուցագրով առաջարկել գնահատող հանձնաժողովի կազմը: ՀԱԿ ՊՈԱԿ-ի տնօրենի 01.06.17 թ.-ի թիվ 7-Գ հրամանով սահմանվել է գնահատող հանձնաժողովի կազմը:

Հայաստանի ազգային կինոկենտրոն ՊՈԱԿ-ը (ք. Երևան, Աշտարակի խճուղի 30) գնահատող հանձնաժողովի կողմից 2017թ. հունիսի 1-ին հաստատվել է «ՀԱԿԳՀԱՊՁԲ17/06» ծածկագրով ընթացակարգի հրավերը և հայտարարության տեքստը, որն էլ նույն օրը ուղարկվել է լիազոր մարմնին,իսկ հաջորդ օրը տեղադրվել է կայքում :

Մրցութային գործընթացը կազմակերպվել է թղթային եղանակով:

2. Գնման անհրաժեշտության և գնման ձևի ընտրությունը

Ապրանքի ձեռքբերման անհրաժեշտությունը պայմանավորված է Հայաստանի ազգային կինոկենտրոն ՊՈԱԿ-ի կարիքների համար վառելիքի ձեռքբերման անհրաժեշտությամբ: Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի գնման ձև է ընտրվել Գնանշման հարցումը:

3. Հրավերը և դրանում կատարված փոփոխությունները

Հրավեր է հանդիսանում «ՀԱԿԳՀԱՊՁԲ17/06» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից հաստատված ընթացակարգի հրավերը:

Հրավերում փոփոխություններ չեն կատարվել:

4. Գնման վերաբերյալ ստացված հարցումները և ներկայացված պարզաբանումները

Գնման վերաբերյալ հարցումներ չեն ստացվել:

5. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները, հասցեները և կապի միջոցները

«ՀԱԿԳՀԱՊՁԲ17/06» ծածկագրով Գնանշման հարցման ընթացակարգի հայտերը բացվել են 2017թ. հունիսի 8-ին: Հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

1	«Ֆլեշ» ՍՊԸ	ք. Երևան, Ե. Կոչբացու 30

6.Հայտերով ներկայացված գները

Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկները.

/ՀՀ դրամ/

Չափա-բաժնի համարը	Գնման առարկայի անվանումը՝	Չափման միավորը	Քանակը	Մասնակցի անվանումը	
				Գնի առաջարկը առանց ԱԱՀ	Պայմանագրի կատարման համար առաջարկված գինը
1	Բենզին/ռեգուլյար/	լիտր	4500	1275000	1530000

Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «Ֆլեշ» ՍՊԸ-ն 1 չափաբաժնի մասով ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից:

7. Հայտերի գնահատման կարգը և դրանց գնահատման արդյունքները

Հայտի գնահատումը կատարվել է մասնակցի կողմից ներկայացված հայտը հրավերի համապատասխանության որոշմամբ:

Ներկայացված գնային առաջարկների հիման վրա հանձնաժողովը որոշեց ընտրված մասնակից ճանաչել «Ֆլեշ» ՍՊ ընկերությանը, որպես

Միակ մասնակից և հրավերի պահանջներին համապատասխանող մասնակից:

8. Հայտի մերժման դեպքում՝ դրա հիմնավորումը

Մերժված հայտեր առկա չեն:

9. Պայմանագիր կնքելու հիմնավորումը

« ՀԱԿԳՀԱՊՁԲ17/06» ծածկագրով Գնանշման հարցման ընթացակարգի շրջանակում ընտրված մասնակցի հետ 2017թ. հունիսի 14-ին կնքվել է գնման պայմանագիր: Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի www.gnumner.am կայք էջում տեղադրվել է կնքված պայմանագրի մասին հայտարարություն:

10. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ հայտնաբերվելու դեպքում դրանց և այդ կապակցությամբ ձեռնարկված գործողությունների համառոտ նկարագիրը

Այդպիսիք չեն հայտնաբերվել:

11. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքները և դրանց վերաբերյալ կայացված որոշումները

Գնման գործընթացի շրջանակում բողոքներ չեն ներկայացվել:

12. Այլ անհրաժեշտ տեղեկություններ

Չկան:

Պատվիրատուի ղեկավար՝ Գ. Գևորգյան

Գնման ընթացակարգի քարտուղար՝ Ա.Ղարիբյան

Կ.Տ

<< 19 >> << 06 >> 2017թ.